

ԿԱՐԾԻՔ

Լիլիթ Ալբերտի Օհանյանի՝ «Ավագ դպրոցի ուսուցչի մասնագիտական մոտիվացիայի զարգացումը որպես կառավարման հիմնախնդիր» վերնագրով ԺԳ.00.01 թվանիշով «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ, մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին:

«Հետազոտության արդիականությունը» բաժնում ատենախոսը հայտնում է այն կարծիքը, որ հասարակության զարգացման բոլոր ժամանակներում էլ կրթության առաջնային խնդիրները համակարգի բոլոր մակարդակներում եղել և մնում են.

- կրթության որակի բարձրացումը և, համակարգի արդյունավետ գործունեությունը,
- քաղաքացիների՝ իրենց ձգտումներին ու ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու մատչելիության ապահովումը,
- ՀՀ ավագ դպրոցի մանկավարժների մոտիվացիայի կառավարման, դրա զարգացման վրա ազդող գործոնների, մանկավարժների մասնագիտական և աշակերտների սովորելու մոտիվացիայի միջև փոխկապակցվածության ուսումնասիրումը:

Իրավացի է ատենախոսը գտնելով, որ դպրոցի արդյունավետ կառավարման միջոցով հնարավոր է զարգացնել ՀՀ ավագ դպրոցի ուսուցչի անձնային ու մասնագիտական որակները և բարձրացնել նրանց կողմից հանրակրթությանը մատուցած ծառայությունների մակարդակները: Այդ պատճառով էլ համակարգի գործունեության առավել բարձր արդյունավետությունն ապահովելու նպատակով ըստ ատենախոսի անհրաժեշտ է՝

- նորովի դիտարկել և ուսումնասիրել ժամանակակից դպրոցի կառավարման առանձնահատկությունները, ոլորտի բոլոր շարժիչ ուժերի և մանկավարժության սուբյեկտների կողմից փոխկապակցված՝ մասնագիտական, մանկավարժական, ուսուցչական անձնակազմի արտաքին ու ներքին մոտիվացիաները:

Չէ որ մասնագիտական և մանկավարժական մոտիվացիան ըստ ատենախոսի ուսուցչի ուսումնադաստիարակչական գործունեությամբ զբաղվելու ձգտումն է, դրդապատճառների ու շարժառիթների ամբողջության պատճառաբանվածությունը, որն էլ գործնականում արտահայտվում է ուսուցչի մասնագիտական գործունեության արդյունավետությունը:

Ի պատիվ ատենախոսի, կարող եմ համոզված ասել, նա լավ գիտի ու համոզված է, որ սովորեցնել, առավել ևս դաստիարակել կարողանալը արվեստ է, իսկ այդ դաստիարակություն կոչվող արվեստի կրողը ուսուցիչն է, նրա աշխատանքային

գործիքները, անձնային ու մասնագիտական որակներն են և դրանց միջոցով անձնավորության վրա ունեցած ազդեցության ձևերն ու եղանակները, դրդապատճառները, շարժառիթները, պատճառաբանվածությունը, ասել է, թե մասնագիտական մոտիվացիան, ինչը ատենախոսը դիտարկում է որպես դպրոցի կառավարման հիմնախնդիր:

Ապահովելով ատենախոսության գիտական ապարատի ներդաշնակությունը, այն է.

- հետազոտության թեմայի ընտրության հիմնավորումը,
- ատենախոսության խնդիրների՝ նպատակին համապատասխանեցումը,
- ատենախոսության թեմայի հետ բովանդակության կապի ապահովումը,
- հետազոտության համար արդյունավետ մեթոդների ընտրությունը,
- եզրակացությունների՝ խնդիրներից բխեցումը,
- աշխատանքի շարադրանքում գրականության արտացոլումը:

Ատենախոսը գիտական համարձակությամբ անցնում է հետազոտության նպատակի իրականացմանը, համապատասխան գիտական ենթադրության՝ վարկածի և խնդիրների բացահայտմանը, երեք կարևոր հարցերի միջոցով: Դրանք են.

- Մոտիվացիա հասկացության հայեցակարգային շրջանակը և տեսական հիմքերը:
- Ուսուցչի մասնագիտական մոտիվացիայի զարգացումը որպես դպրոցի կառավարման հիմնախնդիր:
- ՀՀ ավագ դպրոցի ուսուցչի մասնագիտական և մանկավարժական մոտիվացիայի զարգացման նախադրյալները և պայմանները,

նրանցից յուրաքանչյուրը ներկայացնելով որպես առանձին գլուխ, ամենայն մանրամասը և գիտական պատշաճ մակարդակով ատենախոսն առանձնացնում է լրացուցիչ հարցերի խումբ, որոնցից ամեն մեկը առանձին և մյուսներին լրացնելով օգնում է հստակեցնել ավագ դպրոցի ուսուցչի մասնագիտական մոտիվացիայի զարգացումը որպես կառավարման հիմնախնդիր:

Ապա և քայլ առ քայլ ըստ գլուխների գիտական շարադրանքի մոտենում է հետազոտության հիմնական նպատակին՝ «ուսուցչի մասնագիտական մոտիվացիայի արժևորմանը, դրա զարգացմանը և ներդպրոցական» կառավարման կատարելագործմանը:

Ատենախոսության՝ «Մոտիվացիա հասկացության հայեցակարգային շրջանակը և տեսական հիմքերը» վերնագրով առաջին գլխում հետազոտության հեղինակը գիտական հիմնավորումներով ներկայացնում ու տրամաբանական վերլուծման է ենթարկում.

- Մոտիվացիա հասկացության հայեցակարգային դրույթները, ցույց տալով, որ



մոտիվացիան

- դրդապատճառների ու շարժառիթների ամբողջություն է, պատճառաբանվածություն, որ
- այն դարձել է ոչ միայն հոգեբանության, մանկավարժության, փիլիսոփայության և սոցիոլոգիայի մեջ կիրառվող եզրույթ, այլ մարդկային վարքագծի բացահայտման արտահայտմանը միջոց:
- Մոտիվացիայի գործընթացի փուլերը, իրենց բովանդակությամբ:
- Մոտիվացիայի այլ բովանդակային տեսությունների գործնական կիրառման առանձնահատկությունները դպրոցի կառավարման գործընթացում և իր, որպես գիտական նորույթ համարվող «ուսուցչի մասնագիտական մոտիվացիայի զարգացման ներդրոցական կառավարման տեսական մոդելի» հետ համեմատումը.

Ատենախոսության առաջին գլխում ներկայացված փաստերն ու դրանց վերլուծությունները բերում են գիտական այն եզրակացության, որ ատենախոսի ներկայացրած ուսուցչի մասնագիտական և մանկավարժական մոտիվացիայի տեսական կողմը խիստ ինքնուրույն է և ոչ պակաս գործնական, քան ատենախոսության մեջ հեղինակի կողմից վերլուծված տեսությունները:

Ատենախոսության երկրորդ գլուխը իր՝ «Ուսուցչի մասնագիտական մոտիվացիայի զարգացումը որպես դպրոցի կառավարման հիմնախնդիր» վերնագրով, ամբողջովին կազմում է հետազոտության հիմքը: Այն վերաբերում է ատենախոսության այս գլխում գիտական բարձր մակարդակով հեղինակի կողմից քննարկվող և խորությամբ լուսաբանվող խնդիրներին.

- ուսուցչի մանկավարժական գործունեության բնութագրմանը:
- Սովորելու մոտիվացիայի և նրա վրա ազդող գործոններին, դրանք համարելով
  - մանկավարժի և սովորողների մոտիվացիան,
  - դասավանդման արտաքին մոտիվացիան,
  - սովորելու ներքին ակտիվ մոտիվացիան,
  - մանկավարժական համագործակցության մոտիվացիան, այդ թվում ուսուցչի վերաբերմունքն իր մասնագիտական պարտականություններին, ինքնագնահատման, ինքնահամոզման, ինքնավերլուծության և ինքնակրթության ձևերով:
- Մանկավարժական անձնակազմի մոտիվացմանը և կառավարման գործառույթներին, որոնք ատենախոսը քննարկելով այլ տեսաբան գիտնականների հետ, ներկայացնում է դպրոցի կառավարման իր գիտականորեն հիմնա-

վորված գործառույթները,

Ի դեպ ստենախոսության երկրորդ գլխում արծարծված յուրաքանչյուր հարց նոր խոսք է հիմնախնդրի ուղղությամբ և նորանոր փաստերով էլ ավելի ռեալ է դարձնում հետազոտության գիտական նորույթը:

Ատենախոսության երրորդ գլուխը, որը կրում է՝ «ՀՀ ավագ դպրոցի ուսուցչի մասնագիտական և մանկավարժական մոտիվացիայի զարգացման նախադրյալները և պայմանները» վերնագիրը, նվիրված է.

- Հետազոտության մեթոդաբանությանը և տվյալների վերլուծությանը.
  - արդյունքում հետազոտության նպատակի իրագործման համար կիրառված «մասնագիտական մոտիվացիոն կառուցվածքի ուսումնասիրման», «մասնագիտամանկավարժական մոտիվացիայի ինքնագնահատման», «մանկավարժական մոտիվացիայի վրա կարիերայի ազդեցության», «աշխատանքի դրդապատճառների որոշման», «աշխատանքի մոտիվացիայի» համապատասխան հարցաթերթիկների միջոցով և վարպետորեն ներկայացված գծապատկերների օգնությամբ,
  - ներքին մոտիվացիա ունեցող մանկավարժների մասնագիտամանկավարժական դրդապատճառների տեսակների վերհանմանը ու բացահայտմանը:
- Ներքին, արտաքին դրական, արտաքին բացասական մոտիվացիա ունեցող ուսուցիչների աշակերտների՝ դասապրոցեսի ընթացքում գիտական հիմնավորումներով արձանագրած արդյունքներին:
- Ներքին, արտաքին դրական, արտաքին բացասական մոտիվացիա ունեցող մանկավարժների և նրանց կողմից դասավանդած աշակերտների տվյալների համեմատությանը:
- Ուսուցիչների կարիերայի ձգտման և այդ գծով առաջընթաց ունենալու, տարակարգ ստանալու, մոտիվացիոն և հիզիենիկ, իրար հետ փոխկապակցված գործոնների կարևորության բացահայտման ուղղությամբ հձեռք բերված հետազոտական աշխատանքների եզրակացություններին:
- Ուսուցչի մասնագիտական մոտիվացիայի զարգացման ներդպրոցական կառավարման մոդելին՝ իր
  - ներդպրոցական կառավարման միջոցով ուսուցչի մասնագիտական մոտիվացիայի զարգացումն ապահովող նպատակով,
  - փոխգործակցության միասնականության, արդարության, ուսուցչակենտրոնության սկզբունքներով,
  - դպրոցի գործունեության ռազմավարական և ուսուցչի կարիերայի պլանավորման, զարգացման ապահովման, ուսուցչի կատարողականի ար-



դյունավետության գնահատման, ուսուցչի մասնագիտական մոտիվացիայի զարգացմանը նպաստող մշակույթի խթանման փուլերով,

- մոդելի գործնական արդյունքներով:

- Ուսուցչի մասնագիտական մոտիվացիայի զարգացման մանկավարժական պայմաններին, որոնք հիմնավորված ներկայացվում են իրար լրացնող և միմյանց օրգանական շարունակություն կազմող տասներկու բաժիններով: Ատենախոսության երրորդ գլուխն ավարտվում է «Մանկավարժական մոտիվացիայի զարգացում» դասընթացի նկարագրով:

Ատենախոսության յուրաքանչյուր գլխի մանրագնին ուսումնասիրության միջոցով մենք հանգեցինք այն եզրակացության, որ.

- ամեն մի գլուխ իր ենթագլուխներով հետազոտության նպատակին հասնելու ճանապարհին, բացահայտում է ատենախոսության գիտական ենթադրությունը՝ վարկածը, օգնում է լուծելու հետազոտության առջև դրված խնդիրները, պաշտպանության ներկայացված հայեցակարգային դրույթների հարցերը և, որ ամենակարևորն է սկզբունքորեն հիմնավորում է հետազոտության «գիտական նորույթը»,
- ատենախոսի ներկայացմամբ՝ մոտիվացիա հասկացության հայեցակարգային դրույթները, հետազոտության մեթոդաբանությանը և ուսուցչի մասնագիտական մոտիվացիայի զարգացման ներդրողական կառավարման մոդելը, բացարձակ նոր խոսք են ոչ միայն հետազոտության հիմնախնդրի գծով, այլև ժամանակակից մանկավարժության տեսության մեջ: Իսկ երկու աղյուսակները և քառասունի հասնող և գլուխներում համաչափ դասավորված գծապատկերները զարդարում են ատենախոսությունը, նպաստելով նրա գիտական արժեքի բարձրացմանը:

Ինչ խոսք գրախոսվող ատենախոսությունը բարձրակարգ ինքնուրույն հետազոտություն է, որտեղ հիմնախնդրի գծով գիտական հայտնիների հետ բանավիճելիս, հարգելով նրանց կարծիքները, ատենախոսը հիմնավորում է իր տեսակետը և մնում իր գիտական կարծիքին:

Ասել է, թե ատենախոսությունն իրոք կատարյալ է: Այո, իհարկե:

Բայց էլ ավելի կատարյալ կդառնա, եթե ատենախոսը ընդունի այն դիտողությունները, որոնք մենք պատրաստվում ենք անել: Ահա դրանք:

- Ատենախոսության շրջանակներում հեղինակը «ուսուցիչ» և «մանկավարժ» հասկացությունները դիտարկում է մեկ ամբողջության մեջ, որը մենք համարում ենք գիտական և դիդակտիկական սխալ, կան ուսումնական գործընթացը ղեկավարող սուբյեկտների երեք տեսակ.

- դասատու՝ урокoдaтeль, որի դերում հատկապես այսօր կարող է գտնվել բարձրագույն կրթությունն ստացած ցանկացած մարդ, ով դաս տալուց մեկ օր առաջ դասագրքից «գնում է» իր թեման և հաջորդ օրը, դասաժամին «վաճառում է» աշակերտներին,
- ուսուցիչ՝ учитeль կարող է լինել նա, ով ուսուցանում ու սովորեցնում է աշակերտին, նրան հաղորդում է գիտելիքներ, որոնց օգնությամբ ձևավորում է նրանց անձը, զարգացնում մտահորիզոնը,
- մանկավարժ, педагог համարվում է այն ուսուցիչը, ով սիրում է իր աշակերտներին և մասնագիտությունը, ով ոչ միայն չի ասում երեխային, նրա այսօրվա վաստի համար, այլ սիրում է այն լավի համար, ինչ նրա մեջ դաստիարակում է վաղը:
- Ատենախոսության մեջ նշված են «աշխատանքի նպատակ», «աշխատանքի խնդիրներ» բառակապակցությունները, որի պատճառով այդ կարևոր եզրույթները՝ «նպատակն» ու «խնդիրները» գրկվում են գիտականությունից: Այլ բան են «ատենախոսության նպատակը», «ատենախոսության խնդիրները», առավել ևս «հետազոտության խնդիրները», «հետազոտության նպատակը» բառակապակցությունները:
- Բովանդակությամբ միմյանց լրացնող և իրար օրգանական շարունակություն կազմող «հետազոտության խնդիրներն» ու «եզրակացությունները» ձևով ու կառուցվածքով չեն համապատասխանում միմյանց՝ չորս կետերից կազմված «հետազոտության խնդիրները» ամփոփվում են ինն կետերից ու չորս ենթակետերից կազմված «եզրակացությունների» մեջ, տուժեցնելով ատենախոսության համամասնությունը:
- Ոչ այնքան ընդունելի ենք համարում ինչպես ատենախոսության «ներածականի», այնպես էլ ատենախոսության սեղմագրի «ատենախոսության ընդհանուր բնութագիրը» բաժնի կառուցվածքը:
  - ատենախոսության «ներածականում» բացակայում են աշխատանքի գիտական ապարատի բաղադրամասերը կազմող «օբյեկտը», «առարկան», «հետազոտության մեթոդաբանական հիմքերը», «հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը»,
  - ատենախոսության սեղմագրում դրանից զատ չկան «հետազոտության մեթոդները», «հետազոտության իրականացման փուլերը», «ատենախոսության մշակվածության աստիճանը»:

Մրանք ատենախոսության կառուցվածքը, մեր կարծիքով գրկում են ներդաշնակությունից:



- Ատենախոսությունը ծանրաբեռնված է միայն այն պատճառով, որ քառասունի հասնող, իհարկե բովանդակալից, հետազոտության «գիտական նորույթի» հիմնավորմանը նպաստող գծապատկերները, հատկապես դրանց կրկնվող տեսակները, լինելին ոչ միայն ատենախոսության մեջ, այլև «հավելվածում», քանի որ այնտեղ ևս նրանք կմնային նույն կարգավիճակում ու կզարդարելին նաև ատենախոսության «հավելվածը»:

Պարզից էլ պարզ է, որ նշված դիտողությունները չեն ազդում մեր կողմից ատենախոսությանը տրված բարձր գնահատականի վրա: Եվ մենք մնում ենք այն հիմնավոր կարծիքին, որ ատենախոսությունը

- ատենախոսությունը գիտական բարձր մակարդակի հետազոտություն է, թարմ ու նոր խոսք ոչ միայն իր հիմնախնդրի գծով այլ մանկավարժության մեջ,
- բացարձակ ինքնուրույն և համարյա ավարտուն հետազոտություն է,
- լիովի բավարարում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի և ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող ժամանակակից պահանջները:

Եվ այս ամենի հիմքով միջնորդում ենք ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճաններ շնորհող «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդին Լիլիթ Ալբերտի Օհանյանին իր՝ «Ավագ դպրոցի ուսուցչի մասնագիտական մոտիվացիայի զարգացումը որպես կառավարման հիմնախնդիր» վերնագրով ԺԳ.00.01. թվանիշով, «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ ատենախոսության համար շնորհել մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Պաշտոնական ընդդիմախոս՝

ՀՀ վաստակավոր մանկավարժ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մնացական Մանուկյան

17.02.2020թ.  
ք. Երևան



Պրոֆեսոր Մնացական Մանուկյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՊՄՀ գիտ. քարտուղար, դոցենտ

Սարիամ Իսպիրյան


